

Մ. Մխիթարյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՇՈՒՐՋԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ՄԻ ՊՈԼԵՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Մ. Նալբանդյանը «Հյուսիսսփայլում» հրատարակախոսական ասպարեզ մտնելու հենց առաջին տարիներից հայ իրականության մեջ ունեցավ համախոհների և թշնամիների մեծ քանակ: Նրա գաղափարները եթե առաջավոր երիտասարդությանը համախմբում էին ռեակցիայի դեմ մղվող պայքարի դրոշի տակ, ապա անասելի ատելություն էին առաջացնում ռեակցիոն խավերում, հատկապես հայ եկեղեցու դարավոր դոգմաներին կառչած, նրա տնտեսական հեգեմոն դիրքից նյութական ակնկալություն ունեցող մարդկանց շրջանում: Պահպանողական խավերի այդ ատելությունը առավել մեծ չափով էր մոլեգնում այն պատճառով, որ Մ. Նալբանդյանի, հատկապես լուսավորական գաղափարները, պաշտպանություն էին գտնում «Հյուսիսսփայլի» խմբագիր Ստ. Նազարյանցի կողմից: Պատասխանելով այդ հարձակումներին, Նալբանդյանը հայտարարում էր. «Մենք այստեղ չենք ծառայում մեր արտերին, ինչպես մի քանի գիշերադեմ մարդիկ հայրոջեցին մեզ, այլ սպասավորում ենք ազգի օգտին. գուցե մեզավոր ենք նորանով, որ մեր աչքի առջև են հայոց ազգի համար, սորանից հարյուր տարի հետո գալոց օրերը»¹:

Նալբանդյանի և Նազարյանի համագործակցության այդ էտապում նրանց համար մեծ կարևորություն էր ներկայացնում հայ ժողովրդի լուսավորության գործը, որի վրա էլ նրանք հրավիրում էին ժամանակի հրատարակախոսների ուշադրությունը: Եվ պատահական չպետք է համարել, որ հազիվ «Հյուսիսսփայլի» առաջին տետրակները բաժանորդներին հասած, հայ պահպանողական մամուլում սկսում են հարձակումները Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի այն գաղափարների դեմ, որոնցով նրանք սուր քննադատության էին ենթարկում եկեղեցական քարացած նորմաները, տգետ ու շահասեր հոգևորականներին և մերժելով իր գարն ասլրած գրարարը, պահանջում էին զարկ տալ աշխարհարարին:

Արևելահայ իրականության մեջ ծավալվող այս բանակովին մասնակցում էին կղերա-ֆեոդալական հոսանքի օրգաններ «Ճոռաքաղը», «Մասյաց ազավնին», «Մեղու Հայաստանին»:

Ժամանակի պահպանողական օրգան «Ճոռաքաղի» համար անհանդուրժելի էին Նազարյանի անգամ ամենաչափավոր պահանջները: Այդ է պատճառը, որ Մսերյանները զայրացած «Հյուսիսսփայլի» առաջադիմական ուղղությունից, ոչ միայն դժբախտություն էին համարում Նազարյանի և Նալբանդյանի գործունեությունը, այլև երազում էին հրի

¹ «Հյուսիսսփայլ», 1859, № 11, էջ 909.

ճարակ դարձնել նրանց ստեղծագործությունը, դրանք համարելով հավատ
ընդդեմ ազգագրավ գործեր:

«Ճոռաքաղում» ապագրվում են բազմաթիվ հոգվածներ ուղղված Նա-
ղարյանի և «Հյուսիսսասիայի» դեմ: Պոլեմիկական բնույթի բոլոր այս հոգ-
վածների հեղինակները, հույսերը չկտրելով Նաղարյանի «գարձից», նրանից
պահանջում են հրաժարվել կրոնի դեմ գրած իր հոգվածներից, ընդունել
գրարարի գերազանցությունն աշխարհարարի հանդեպ և հարգանքով լցվել
դեպի հայ եկեղեցու հոգևոր պետերը: Մսերյանները բացահայտ բանավեճին
զուգրնթաց իրենց ատելությունը Նաղարյանի և Նալբանդյանի նկատմամբ
արտահայտում էին նաև անձնական նամակների և գանազան գրություն-
ների մեջ: Մսերյանների արխիվում մենք գտանք Չ. Մսերյանի մի պատկ-
զիրային բանաստեղծությունը ուղղված Նաղարյանի և Նալբանդյանի
դեմ, որը չափաժող հայհոյանքի նմուշներից կարող է լինել¹.

Չարին ծնունդ Նաղարյանց,	Կեր Լութերի քալ պասը,
Ի շարության գերազանց,	Եվ մի պահեր մեծ պասը,
Եվ քո ընկեր Վարչամյանց	Խըմե փիփայն ի վերա,
Լիրը է նման հաջող շանց:	Սագայի հետ քեփ արա:
Մյուս վարդապետ անվեղար,	Լուսավորչու լույս հավատ
Սուտ առաքյալ մեղ է գար.	Պիտի մնա միշտ հաստատ.
Չես դու արժան փրկավին	Վնասել նմա թե ջանաս,
Չե ուտեցող ևս լավին:	Իմացիր, շուտ փրչանաս:

Էջմիածնի սուրբ աթոռ
Չուղե քեզ պես գիժ տոբիսը.
Մեծ մեծ ապա մի բրգեր,
Որպես նոր ոմն Լութեր².

Հասկանալի է, որ Մսերյաններին հայտնի էր Վարչամյանի ով լինելը-
Նալբանդյան—Վարչամյանի նամակը «Ճոռաքաղի» լեզվի մասին և Նալ-
բանդյանի գործունեությունը «Հյուսիսսասիայի» էջերում չէր կարող շար-
ձագանքվել Մսերյանների կողմից: Իայց Մսերյանները մենակ չէին:
Մեջագրավ է, որ «Հյուսիսսասիայի» ոխերիմ թշնամի Չ. Չերքեզյանը Նա-
ղարյանին ուղղված մի նամակում չկարողանալով իրեն զսպել, գոչում է.
«Վայ քեզ և Նալբանդյանցին, եթե կենդանի լինեք ներսեսը աշխարհիս հո-
ղագնդի վրա տեղ չէիք գտանելու ձեր պայմաններով. արգարև այդ պայ-
մանի համար շատ և շատ հարկավոր էր ներսեսը»³:

Գ. Այվազովսկին, սակայն, կատարում է այն, ինչ ցանկանում էին
Չերքեզյանը և նրա նմանները, ջանալով իր ստոր գավերով և ամրաստա-
նություններով հրապարակից հանելու Մ. Նալբանդյանին և «Հյուսիսսա-
սիայի»:

Բր «Մասյաց աղավնու» շուրջը համախմբելով հայ սեակցիոն օրգան-
ներ «Ճոռաքաղը» և «Մեղու Հայաստանին», Այվազովսկին հայ իրականու-

¹ Տես Հայկական ՍՍԽ Պետական Մատենադարանի Մսերյանների արխիվ, թղթա-
պանակ 208, վավերաթուղթ 1705:

² Վերջին տողը առաջին վարիանտում եղել է. «Նոր դու Վոլտեր, նոր Լութեր»:

³ «Մասյաց աղավնի», 1860, էջ 190:

թյան մեջ կազմում է մի յուրատեսակ ռեակցիոն կենտրոն, որը կազմակերպված պայքար էր ծավալում «Հյուսիսսփայլի» և հատկապես Նալբանդյանի և Նազարյանի դեմ:

Հայտնի է, որ «Ճոռաքաղից» էլ առաջ, նույն դիրքերից Նալբանդյանի և Նազարյանի դեմ պայքարում էր «Մեղու Հայաստանին»:

Մանդինյան քահանան իր թերթի հրատարակութեան առաջին խսկ տարվանից, 1858 թ. քննութեան էր ենթարկում «Հյուսիսսփայլում» տպագրված բոլոր հոդվածները և քննադատում դրանց պարունակած նոր գաղափարները:

Հետաքրքրականն այս պայքարի մեջ այն է, որ Մանդինյանը Նազարյանին դատապարտում է Նալբանդյանի նման «անզգաստ ու անհեռատես» մի երիտասարդի հետ համագործակցելու և նրա հոդվածներն իր ասագրում տպագրելու համար:

Չնայած Նալբանդյանն աստուծոմ էր իր ժամանակը՝ խոսելու «խելացնոր մարդուն արժանի լողիկայով» գրված «Մեղու Հայաստանի», «Ճոռաքաղ» և «Մասյաց աղափնի» պարբերականների մասին, այնուամենայնիվ ստիպված պատասխանում է իր հակառակորդներին: Հանձին հայ ռեակցիոն գործիչներին, Նալբանդյանը չէր տեսնում իր, կամ Նազարյանի անձնական թշնամիներին. «Մեղու Հայաստանին» նա համարում է կովկասում կազմված ռեակցիոն գործիչներին «ճախնային ու խավարասեր ընկերութեան» բերանն ու գործիքը և պոլեմիկայում չի խնայում Մանդինյանի անունը, պաշտոնն ու տիտղոսը:

Նույնպիսի անողորմութեամբ Նալբանդյանը քննադատութեան է ենթարկում Մանդինյանի համախոհներ Իսահակյանին և Չերքեզյանին:

Նալբանդյանն իր հյուսիսսփայլյան շրջանի գործունեութեան ընթացքում բազմիցս անդրադարձել է Այվազովսկու հակաժողովրդական գործունեութեան մերկացմանը: Իր մղած բանավեճում նա դուրս գալով առօրյա հարցերի շրջանակներից հակադրվում է Այվազովսկու քաղաքական հայացքներին: Նրա ազգի միասնութեան կոչին ի պատասխան, Նալբանդյանը գրում է. «Էռույսը չէ կարող հաշտվիլ խավարի հետ, ճշմարտութեանը ստութեան հետ. այդ վեճը և պատերազմը հարկավոր էր, որ մի օր հառաջանային մեր ազգի մեջ, հարկավոր էր, որ լույսը և ճշմարտութեանը ոտարորիկ քշեին Հայաստանի ծխյալ ավերակներից խավարի և ստութեան չար դեր: Մենք բուն այդ վեճի մեջ տեսանում ենք լուսավորութեան և խիստ բարոյականութեան սկիզբը»¹. «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետում և հատկապես իր «Հիշատակարաններում» Նալբանդյանը մեծ տաղանդով պատկերելով հայ ռեակցիոն ժուռնալիստների կերպարները, սուր քննադատութեան է ենթարկում նրանց:

Նալբանդյանի պոլեմիկական հոդվածներն, իրենց գաղափարական հագեցվածութեանից բացի, աչքի են ընկնում անմիջականութեամբ, տրամաբանութեան ուժով և երգիծանքի զարմանալի հարուստ երանգներով: Այսպես, ցանկանալով ցույց տալ «Մեղու Հայաստանի» թերթի և մեղվականների անկարողութեանը՝ որևէ ազգօգուտ գործ կատարելու մեջ, Նալբանդյանը գրում է, թե ազգն անարգողները նրանք չեն, որոնք հրապարակում

¹ «Հյուսիսսփայլ», 1858, № 2, էջ 365:

են աղգի ցավերը, այլ «այն սուտ աղգասերքը, որ խեղճ ողորմելի Մեղուին լծել են մի սայլի և ինքյանք լցվելով մեջը հարկադրում են նորան ավելի մեծ ասպարեզ կատարել աշխարհի երեսին, հայկական լուսավորության մեջ, քան թե բնությունը կարողություն էր տվել մեղվին»¹:

Մի այլ տեղ, խոսելով Մ. Իսահակյանի հողավածների անհեթեթության մասին, նրան խորհուրդ է տալիս գնալ Եվրոպա և այնքան ուսանել, որ խոսելու ժամանակ դահճի պես չվարվի լոգիկայի հետ: Իննադատելով նույն Իսահակյանի մանկավարժական հայացքները, Նալբանդյանը գրում է. «Պեղազոգիան շատ կարծր բան է նորա դյուրափխրելի ատամների համար»: Խուզարարչյանի «Հայոց պատմության» թողած ողբալի տպավորությունը նա հետևյալ կերպ է հաղորդում իր ընթերցողներին. «Երբ սկսեցի կարգալ, արգեն հառաջարանը, ասես թե աստակ իջեցուց երեսիս. հարկ չկա ասել, որ բոլոր գիրքը կարգալը հավասար է կից ընդունելու»:

Իրրև պոլեմիկական պայքարի ղենք, Նալբանդյանը մեծապես օգտվել է ոուս ուկրայնցիոն-դեմոկրատների պայքարի միջոցներից: Նալբանդյանը հաճախ է օգտագործում գործուկրոլյան «Խավարի թագավորություն» և այլ հանրահայտնի տերմինները:

Մ. Նալբանդյանը լրջորեն հետևում էր ոուս ուկրայնցիոն-դեմոկրատների գործունեությանը և Գերցենի ու Օգարյովի ազատ տպարանի հրատարակություններին: Այդ ցույց է տալիս նաև հետևյալ փոքրիկ, բայց ըստ էության ուշագրավ փաստը: 1860 թվականին գրած իր «Երկու տող» պամֆլետում սպանիչ ծաղրով պատասխանելով արևմտահայ ուկրայնցիոններ Չամուռճյանի հայհոյանքներին, Նալբանդյանը գրում է. «Ինչ որ մեղ է վերաբերվում, այդ հայհոյությունների ընդդեմ, ուրիշ բան չունենք ասելու, բացի այն խոսքերից, որ հուշակալոր Ֆոքսը գրեց մի անգլիական լորդի, որ գրել էր նորան հայհոյությամբ լցված մի նամակ. «Sir, ձեր նամակը, այսինչ թվականից, ստացա: Այդ նամակը առջևս է այժմ, քառորդ ժամից հետո կլինի քամակումս, որի մասին շնորհ ունեմ տեղեկություն տալ Ձեզ. անձնանվեր Չ. Ֆոքս»:

Պոլեմիկական այս սուր պրիոմը Նալբանդյանի կողմից բառացիորեն վերցված է Գերցենի «Կոլոկոլից»:

Ա. Ի. Գերցենն իր դեմ ույս տեսած ոմն գրչակ Ելագինի հայհոյանքներով լցված «Իսկանդեր-Գերցեն» գրքին ի պատասխան, «Կոլոկոլի» 1859 թվականի № 57—58-ում գրում է. «Что, в самом деле, сказать на сквернословие каких-нибудь синодальных писарей и семинарских риторов старого порядка, кроме того, что отвечал знаменитый Фокс одному лорду, написавшему к нему письмо, исполненное брани и дерзости: « Sir, письмо Ваше от такого-то числа я получил. Оно теперь *передо мной*, через четверть часа оно будет *за мной*, о чем честь имею Вас уведомить. Преданный Вам, Ч. Фокс»².

Անգամ «Հյուսիսափայլից» հեռու, իր արտասահմանյան երկրորդ ճանապարհորդության շրջանում, նա, հետևելով հայ ժուռնալիստիկայի ասպարեզում ծավալվող պայքարին, մասնակցում է դրան: Հիշատակության արժանի է հետևյալ փաստը: «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. № 13-ում Սեյաթ ստորագրությամբ տպագրվում է այդ թերթի և «Ճոռաքաղի» դրա-

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 360:

² «Колокол», 1859, № 57—58, стр. 482.

կան աշխատակից Պետրոս Մադաթյանի «Տեսիլ» պասկվիլային բանաստեղծութունը՝ ուղղված Նազարյանի դեմ: Բանաստեղծը ծաղրելով Նազարյանի գիտական աստիճանը, նրան համարում է անսիրտ, ազգատյաց և չար գործերի ընդունակ մեկը, որն իբրև գիտնական լինելու նշան, դժոխքից նվեր է ստացել մեկ ավանակի գլուխ: Այդ գլուխն ստացող յուրաքանչյուր ոք կարող էր, ըստ Սեյաադի, աներկյուղ կերպով մարդիկ վատարանել, «հաչել, քրիբել և այպանել» (հայհոյել և ծաղրել):

«Տեսիլ» բանաստեղծության միջոցով հայհոյելով հակառակորդին, Մանգինյան քահանան տողատակի ծանոթության մեջ անուղղակիորեն հայտնում է Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետի սյուժեի իր իրադեկուսյան մասին¹: Սոսեյով պրոֆեսորության աստիճանի մասին, Մանգինյանը գրում է. «Այս գիտնական բառը պրոֆեսոր է նշանակում և յուսում զի բարեմիտ ընթերցողք զիս արժանի ներողության կը համարեն, վասն զի որպես արքայությունն, նույնպես և դժոխքն ունին զղանազան գիտնականս, որպես վկայե և քաղցրարան Բարոն Բրամբեուսն»²:

Այսպիսով, չնայած Նալբանդյանի պամֆլետն առաջին անգամ տպագրվել է 1881 թվականին, 60-ական թվականներին անկասկած տարածվելով ձեռագիր օրինակներով, կատարել է իր դերը որպես հայ անցենդուր մամուլի առաջին արտահայտություններից մեկը:

Հավանաբար որոշ ուշացումով ծանոթանալով «Տեսիլ» բանաստեղծության հետ, Մ. Նալբանդյանը 1861 թ. շտապում է իր պաշտպանության տակ առնել Ս. Նազարյանին և «Հյուսիսափայլի» էջերում հանդես է գալիս մի պատասխան ֆելյետոնով: Այդ ֆելյետոնը պարունակող Նալբանդյանի նամակը «Հյուսիսափայլում» տպագրվում է Ա. Ա. Ե. ստորագրությամբ³:

Ամբողջությամբ մեջ բերելով Նալբանդյանի ֆելյետոնը, մենք ցանկանում ենք ցույց տալ ոչ միայն Նալբանդյան-պոլեմիստի բանավեճ վարելու փայլուն կարողութունները, այլև եղպոսյան լեզվին տիրապետելու նրա վարպետության աստիճանը և անողոքությունը՝ ռեակցիոն լազերի գրչակների նկատմամբ:

«Անցյալ 1860 թվականի հունվար ամսո 23-ին⁵ պատահելով Սատանի հայ Շումե⁶ գյուղի մեջ, տեսա մի զարմանալի անասնանոց, թեպետ վաղուց տեսած էի, բայց այդ ամենից զարմանալի էր, որի մուտը արժեր 6 կոպեկ⁷. շուտով հատուցի և մտա. բայց ինչպես զարմացա վերահատու

¹ «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետի սյուժեն Նալբանդյանը վերցրել էր Սենկովսկու (Բարոն Բրամբեուս) „Большой выход у сатаны“ ֆելյետոնից:

² «Մեղու Հայաստանի», 1860, էջ 28:

³ «Նալբանդյանը և նրա ժամանակը» իր մենագրության մեջ բնկ. Ա. Հովհաննիսյանը հաստատում է, որ «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետը «Հյուսիսափայլի» համար տպագրության է պատրաստվել 1859 թվականին:

⁴ Նալբանդյանի երկերի կոմենտատոր բնկ. Ն. Մուրադյանը այդ նամակն իրավացիորեն վերագրելով Նալբանդյանին, և խոսելով նրա մեջ արժարժված մի շարք հարցերի մասին, չի անդրուդառնում ֆելյետոնի վերծանությունը:

⁵ «Տեսիլ» բանաստեղծությունը տպագրված է «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. հունվարի 23-ի համարում:

⁶ Անոգրամ՝ Մեղու Հայաստանի:

⁷ «Մեղու Հայաստանի» թերթի մեկ տարվա բաժանորդագինն արժեր 6 ուլրի:

լինելով, մի քանի բողոքից հետո դուրս երևեցավ մի լայն վարտիքով հագնւած մարդ. փանտեստոն Մատատինիոն¹ անունով, մորուքը շփացնելով կանգնեց հանդիսավորների առաջը. ապա գանչեց բիրտ ձայնով. «Որսկան², դուրս արի շուտ և պատմիր այս հանդիսավորներին քո սրսածները». իսկույն դուրս եկավ մի հաստափոր արջի կերպարանքով կենդանի, կանգնեց տիրոջ առաջ, հետի երկու թաթերի վերաւ: Ես որոշ նկատեցի, որ այդ կենդանին հավատարիմ ծառա պիտի լիներ, որովհետև կարմիր վզնոց էր ստացել յուրյան տիրոջից. այդտեղ հանդիսավորներից, ոմանք Արարատյան ավերակների բորենի ասացին. և ոմանք Շամախու նահանգի Ղարալիու անտառի արջ ասացին: Մի փոքր դժուար նկատելի էր, որովհետև այդ անասնանոցի մեջ կախոված կանթեղները խափար լուսավորութեան մեջ էին, միայն դարմանակին այն էր, որ գլուխը ներկել էին այդտեղ ինձ հավատացրին, որ այդ կենդանին չորս լեզվի երգիչ է³. մի փոքր ժամանակից հետո անհարմար բերանը բացեց ու երգել կամեցավ. մի քանի վայրիվեր, զայր դուլը խոսեց, այդտեղ մի քանի խոշորամիտ մարդերից ծիծաղ ծափահարութեամբ առաջացավ. այսպիսի հիմարութեանները տեսնելով բանիմաց հանդիսավորները ծաղրածու ժպիտով հեռացան այդ հիմարանոցից⁴:

Միանգամայն պարզ է, որ չնայած ֆելյետոնը գրված էր Լոսպոսյան լեզվով, ժամանակին այն հասել է իր նպատակին՝ գաղափարական պայքարում վերջնականապես ջախջախելով «Մեղու Հայաստանի» թերթի խրմբագրին և նրա կամակատարներին:

Նախընդանի ֆելյետոնի տարագրութեանից երկու ամիս անց, «Հյուսիսափայլի» 1861 թվականի № 11-ում տարագրվում է նույն հարցին նվիրված Վահուճու «Ազգ» բանաստեղծութեանը: Առանց Սեյաթյի անվան հիշատակութեան, Վահուճին ամբողջ բանաստեղծութեան մեջ խոսում է զգանազան խոստմունք, անարգ պարզեներ՝ ստացած անարժան գործչի մասին, որն առանց նվիրական սկզբունքների միայն իր քաղցած փորն է կշտացսում: Վերջում միայն Վահուճին բացահայտելով իր հերոսի ինքնութեանը, ավելացնում է.

Առանց խորհրդի, խոսելն է անխել,
Թուղթ անմտութեամբ թանաքով ներկել.
Ինչ, որ սորդ, քո հետ ինձ հարկ չէ խոսել
Դեռ այսքան գրածս քեզ անարժան է:

Այս բանաստեղծութեանը թերևս արվեստի տեսակետից թույլ է և անկատար, բայց Վահուճին Նախընդանի պոլեմիկական մեթոդներից օգտվելով, իր ժամանակի գրական-քաղաքական պայքարում անկասկած մեծ դեր է կատարել ու ժեղացնելով «Հյուսիսափայլի» ճակատը:

Գաղափարապես հագեցված և միշտ կյանքի հետ կապված Նախընդանի հոգվածներն ստանալով իրենց բովանդակութեանը պատշաճ ձև և

¹ Անողրամ՝ Սակփաննոս Մանդինյան:

² Որսկան-պարսկերեն լեզվով նշանակում է սեյաղ («Տեսիլ» բանաստեղծութեան հեղինակի անվան բառախոսք):

³ Բանաստեղծ Պ. Մաղաթյանը (Սեյաղ) իր աշուղական երգերը գրում էր մի քանի լեզվով:

⁴ «Հյուսիսափայլ», 1861, № 9, էջ 225:

երանգներ՝ վեր էին ածվում մի-մի մահացու գենքի՝ բուն գայրույթ առաջացնելով ունակցիոներների լազերում:

որ «Հյուսիսսփայլը» 60-ական թվականներին լայն ժողովրդականութուն էր վայելում հայ իրականության մեջ, այդ ախտալից խոստովանում է և Ջ. Մսերյանը: Հիշատակելով այն փաստը, որ Խալիբյան դպրոցի մասին գրած իր հոգիածը բնորոշելով չի գտնում ժողովրդի մեջ, Մսերյանը գրում է. «Մեր ժողովրդեն շատերն, (որպես աչօք տեսած եմ և լսում եմ) յոյժ գայթակղեցան «Հյուսիսսփայլի» շնորհքով, օրինակի համար պատմեմ ձեզ գհեանյալը: Երբ որ «Ճոռաքաղի» երկրորդ տետրակի մեջ ես տպեցի քանի մի խոսք Խալիբյան ուսումնարանի վերայ, շատերն (որոնց անունքը տալ հարկավոր չէ) մեղադրեցին զիս՝ ավելորդ համարելով բուրբոլին գայն հոգուածոյ հրատարակումը, ըստ որում հիմնադրի սեպհական արգեամբն շինված չէ ասում էին այն ուսումնարանն, ինչպես բացահայտ գրված է «Հյուսիսսփայլի» մեջ»¹:

Ահա թե ինչու պայքարը Նալբանդյանի և նրա ամբիոնը հանդիսացող «Հյուսիսսփայլի» դեմ գառնում է պահպանողական գործիչների առաջնահերթ խնդիրը, որոնք աստիճանաբար ավելի են համախմբվում միմյանց շուրջը: Իրենց նպատակների համար նրանք օգտագործում են նաև արևմտահայ ունակցիոն մամուլը: Մսերյանի արխիվում մենք ծանոթացանք մի շարք նամակների հետ, որոնք հաստատում են այդ Այսպես, «Արշալույս Արարատյան» թերթի խմբագիր Գ. Պալղազարյանը Ջ. Մսերյանին ուղղած մի նամակում գրում է. «Երբ ընդդեմ «Հյուսիսսփայլ» լրագրույն հաջորդ թուով Արշալույսոյ ունիմ հրատարակել: «Արշալույս Արարատյան» լրագրում տպագրվում է մեկ այլ, անստորագիր թղթակցութուն, որի հեղինակը արդեն պատկանում է Նալբանդյանի կովկասահայ թշնամիների թվին: Ներսես Աշտարակցու այդ արբանյակը հրատարակորեն հայհոյում է Նալբանդյանին՝ ն. Աշտարակցու դեմ վարած նրա պայքարի համար: Հավանաբար այդ թղթակցությունների թիվը մեծ է եղել, որովհետև Պալղազարյանն իրարամերժ այդ գրությունները հասկանալու համար գիտում է Ջ. Մսերյանի օգնությունը. «Ազաչեմ ծանուցել ինձ համառոտիվ թե զինչ են կարծիք ձեր գհանգուցյալ Միքայել Նալբանդեանց, զի այն ինչ ումանք բարձրացուցանեն զազգասիրություն նորա գերկինս, այլք թջուցանեն զնա, ի գժոխս, իրրև երիտասարդ մի խառնակիչ, անհավատ և ինքնահավան: Յուզարկել են ինձ ՚ի Տիխիսէ ստորագրությունք կենաց նորա, որ չարաչար դատապարտէ զնա»:

Ա. Երիցյանի արխիվում մենք ծանոթացանք մի այլ հետաքրքրական նամակի հետ, որ պատկանում է Ներսես Աշտարակցու թարեկամ, ունակցիոներ Ա. Թայիրյանի գրչին: Թայիրյանն այդ նամակը գրել է 1879 թ. մամուլում հրատարակելու գիտավորությամբ: Այն կրում է «Ուստագհնացություն ՚ի գերեզման Յարություն վարդապետի Ալամգարյանի, ՚ի նոր նախիջևան» վերնագիրը և պատմում է Ա. Թայիրյանի այցը իր ուսուցիչ Հ. Ալամգարյանի գերեզմանին: Ալամգարյանի շիրիմին հարկեղած հարգանքը մատուցելուց հետո Ա. Թայիրյանը Մ. Նալբանդյանի գե-

¹ «Ճոռաքաղ», 1859, էջ 189:

² Հայկական ՍՍԽ Պետական Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 205, 4. 1170:

րեզմանի մասին գրում է. «Այն էր գերեզմանն յավիտենական մոռացութեան արժանի՝ Միքայելի Նալրանդյան, հալածելոյն իրավամբ ի ներսիսէ կաթողիկոսէ սակս յուրոց ամբարշտական վարուց և գրութեանց, և ի կայսերական կառավարութենէ դատապարտելոյն յաքսորն ի պատճառս խոտովարար և ապստամբական գնացիցն, որք նմանեաց նորա միայն կարող են արդեօք հաճոյանալ»:

Բոլորովին հակառակ զգացմանց զորս ազգեաց յիս տեսություն տապանի Ալամդարյանին՝ ազգեցին յիս տեսություն և բօանք պաշտոնեիցն զՆալրանդյանեն, մանավանդ այնորիկ, զորս պատմեին նոքա զցասմանէ և զիրավացի մեղադրանաց Տերութեան առ Նախիջևանցի բարեկամս խոտովարարին, որք արժան համարեալ էին պատուել զգիական պետական ոճրագործին տարապայման շքով և մեծարանօք իրրև զախոյանի ապերասան ազատութեան և կոյր ազգասիրութեան: Յայժմ հիշեցի ես դառն տրտմությամբ և զայն ևս՝ թէ այդպիսաց առն համարձակեցան ոմանք ի տեղիս տեղիս յայսմ իսկ ամի կատարել հրապարակաւ զհանգես հոգեհանգստեան երիտասարդին այնորիկ առիթ առեալ զվախճան բարեկամին նորա և հետևողին Ստեփաննոսի Նաղարեանց, հիմնելով զհիացումն յուրյանց ի վերայ սուտ ենթադրութեան՝ որպես թե Նաղարյանցն եղեալ իցէ վերանորոգիչ լեզուիս մերոյ՝ օգնականությամբ զՆալրանդյանին, ոչ յիշելով զմոլորությունսն զորս քարոզեցին երկոքին նոքա ի Հյուսիսային անուանյալ ամսագրին յուրյանց, և ոչ զայլանդակ Հանգես նոր հայախոսութեան և զայլ գրուածս Նաղարյանցին խայտառակյալս արդեն հերքմամբ Հովսեփայ Զերբեղյան, Առաքելի Այրարատյան և այլոց բազմաց:

Այլ ես ընդ այն զարմանամ զի հոգևոր իշխանություն ազգիս ներէ կամ հրաման տայ կատարել հրապարակաւ ի վերայ այսպիսեաց հանգես եկեղեցականս, գրեթե իրրև ՚ի վերայ մարտիրոսաց:

...և զարմանք մեր և ապշությունն առավելու ևս ընդ այն՝ զի և ի վանայ եկեղեցւոյ Տփլիսու կատարեցաւ պաշտօն հանգստյան Ստեփաննոսի Նաղարյանց՝ իհարկե թույլտուությամբ կամ հրամանաւ սրբազան առաջնորդին, յորմէ ցանկալի էր մեզ առնուլ տեղեկություն ուղղակի կամ ի ձեռն բարձրագոյն հոգևոր իշխանութեան՝ թե արդյոք որով պատճառանօք արժանացաւ Նաղարյանցն՝ քարոզիչն լուսերականութեան՝ ընդունել զպատիւ այնպիսի ի մայր եկեղեցւոյ Տփլիսու»:

Սակայն չնայած պահպանողականների ջանքերին, սերբ և հետաքրքրութեանը Մ. Նալրանդյանի անվան նկատմամբ չտեսնված չափերի են հասնում հատկապես նրա ձերբակալությունից հետո ոչ միայն Ռուսաստանում, այլև Կ. Պոլսում, Չմյուռնիայում, հնդկահայ զաղութներում և այլուր:

60-ական թվականներին հայ պահպանողական մամուլի դեմ վարած իր սկզբունքային պայքարում Նալրանդյանը կոփվում է, առավել հասունանում: Դեպի արտասահման կատարած իր երկրորդ ճանապարհորդության շրջանում նա սերտորեն կապվելով ոուս ուսուցիչներ-գեմոկրատների հետ, նրանց գաղափարական ազդեցությամբ Փարիզում հրատարակում է «Երկու տող» պամֆլետը, ինչպես և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը:

¹ Հայկական ՍՍԲ Պետական Մատենադարան, Ա. Երեցյանի արխիվ, թղթ. 149, Վ. 85: